ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՐԱՐԱՏՅԱՆ

1868 թ., ապրիլի 27, շաբաթ, N 830

«Ասկե առաջ հրատարակված ազգային պարտուց ցուցակին մեջ ՈՒսումնասեր ընկերության վարժապետաց ձգած պարտքը 61,325 ղուրուշ նշանակված էր։ ... Վարժապետաց պարտուց փոխարեն հիշյալ ընկերությունը նույնչափ գումարի սեփականյալ կալվածոց վարձքերեն պահանջք հանձնեց ազգային սնտուկին։ ՈՒսումնասեր ընկերության՝ հանձնաժողովույս խրկած վարժարանաց տարեկան ծախուց ցուցակին մեջ, նույն վարժարանաց ծախուց համար ազգային սնտուկեն սեպհականյալ գումարեն 1800 ղուրուշի չափ պահանջ մը ունի, որ ազգային ուրիշ հաշիվներու հետ քննության տակ է, և ասկե ետքը պիտի հրատարակվին ի տեղեկություն բոլոր ազգայնոց»։

1868 թ., մայիսի 25, շաբաթ, N 832

Մայիսի 14-ին Իզմիրի Մեսրոպյան և Հռիփսիմյանց ազգային վարժարանաց նորահաստատ ընդհանուր կանոնագիրը աշակերտաց ներկայացնելու առթիվը գեղեցիկ հանդես մի կատարվեցավ։

«Երեք լուսավորներ (Տեր-Հովհան Միրզա Վանանդեցի, Ռ. Անդրեաս Փափազյան և Մարգար Միրզա Վանանդեցի), որոց առաջինը 1797-են հիմ և սկիզբ եղավ ապագա արդեանց, երկար տարիներով աս միևնույն սրահին մեջ քալեցին»։

(1868 թ. մարտի տվյալներով Իզմիրի հայերը մեկ միլիոն ղուրուշ (972,695) պարտք ունեին)։

1869 թ., փետրվարի 1, շաբաթ, N 850

ԼԱ ՐԵՖՈՐՄ ԿԱՄ ԹԱՆԶԻՄԱԹ

«Այս անունով և գաղղիերեն լեզվավ քաղաքական, բանասիրական և առևտրական նոր օրագիր մի սկսավ հրատարակվիլ քաղքիս մեջ անցյալ շաբթվանե ի վեր. որուն պատասխանատու տնօրենը Ամերիկայի հյուպատոսարանին առաջին թարգման մեծահարգ Աղազարյան Խաչատուր աղան է, և խմբագիրը՝ Ոսկանյան մեծապատիվ Ստեփան աղան, որ յուր բնական ուշիմությամբը և գիտնականությամբը ծանոթ է գրագետ հասարակության։ Ասոնք՝ ինչպես հայտնի է, հայ Զմյուռնիայի և Հայաստանյայց մայր սուրբ եկեղեցվույն հավատարիմ զավակներեն են, և այս նկատմամբ ԼԱ ՐԵՖՈՐՄԸ կրնա իրավամբ անդրանիկ կոչվիլ, վասն զի առաջին գաղղիարեն օրագիրն է, որ կը հրատարակվի և կըխմբագրվի հայկազուններե։ Այս օրագիրը շաբաթը երկու անգամ, այսինքն՝ հինգշաբթի և կիրակի օրերը կելլե. տարեկան արժեքը մեկ անգղիական լիրա է։

Սիրելի է մեզ հուսալ, թե ԼԱ ՐԵՖՈՐՄԸ՝ որ արդեն սիրով և համակրությամբ ընդունվեցավ հայազգի և օտարազգի հասարակութենեն քաղքիս, հայոց պատիվը պիտի ավելցնե օտարաց առջև և ազգային օգուտները խոհեմությամբ ու ազգասիրական ոգվով պիտի պաշտպանե. քանզի Փարիզի մեջ դաստիարակյալ մեծապատիվ խմբագրին ճարտար և ազդու գրիչը, որուն գովեստը հաճությամբ սրտի կը լսեմք նույն իսկ գիտնական գաղղիացիներե, կարող է շատ օգտակար ծառայություններ մատուցանել թե օսմանյան բարեխնամ տերությանը, և թե անոր հավատարիմ հպատակ Հայոց ազգին»։

1869 թ., փետրվարի 15, շաբաթ, N 851

Լա րեֆորմ կամ թանզիմաթ

Ոսկին ի բով, և ազգ մը իր լրագրովք փորձվի

Անոնք մեյմեկ փառք են մեծ, և ղեկ՝ անկյալ ազգերու

Քաղաքակիրթ Եվրոպան օրինակ մեզ թող լինի.

Նա մանավանդ նոր աշխարհն, որ ստվեր ձգեց հիներու։

... Այո՛ Զմիռի հայ ազգը կըվայելե մեծ սիրով,

Օտարներե նվիրված նոր պատվո նոր հավաստի

Զի հոս Հայկա որդի մը գաղղիական վեհ բարբառով

Յասպարեզ կուտա փառօք դրոշակ ի ձեռս գեղանի։

Ո՛վ է այս նահատակը, և ի՞նչ դրոշին յուր անուն

Ինքն արդեն հոս ծնած և ուսած իսկ ըլլալուն,

Ըզմյուռնիացվոց մեզ ծանոթ պարոն ՍՏԵՓԱՆՆ է ՈՍԿԱՆ,

Իսկ այլոց իր ԱՐԵՎԵԼՔ ու ԱՐԵՎՄՈՒՏՔՆ է թարգման.

Եվ իր դրոշը ԼԱՐԵՖՈՐՄ կամ ըստ տաճկաց ԹԱՆԶԻՄԱԹ

Ասպարեզը լըրագիր, ուր կըսկսի քայլ զվարթ։

ԼԱ ՐԵՖՈՐՄ-ը հայության կրնա նյութել բարիք մեծ

Եթե անոր սիրելի, բայց դժվարին ուղվույն մեջ,

Խոչընդոտներն հարդարել, և օտարաց դեմ ազգին

Պատիվն հաճի պաշտպանել, որ է այնքան թանկագին։

Վաղեմի աշակերտ Ս.Մեսրոպյան վարժարանին

1869-ից պատարագի ժամանակ տեղապահ պատրիարքի անունը ասվելու էր «Մերոյ պատրիարքության Տեղապահ տեր Արիստակես Ս. Արքեպիսկոպոս», և ոչ թե «Կ. Պոլսո պատրիարքության տեղապահ»։

Ծռազատիկի հարցը

1869 թ. օգ. 13-ին Սուլթանի գահակալութ. տարեդարձի առթիվ լուսավորչական տեղապահ սրբազանը (պատրիարքը) հունական պատրիարքից հետո ընդունվելու փոխարեն, ընդունվում է կաթոլիկ Հայոց պարագլուխ Հասունյանը։

1869 թ., մարտի 15, շաբաթ, N 853

«Մասիսին 908 թվույն մեջ պարոն Վաղարշին տրամախոսությունը կարդացինք, և ցավոք սրտի, տեսանք, որ Իզմիրի ԼԱ ՐԵՖՈՐՄ գաղղիերեն օրագրին վրայոք ըրած խորհրդածությունները անձնական կիրքե ներշնչյալ են և հայտնապես կռիվ կը փնտռե. որպես թե հայերեն լրագրաց միջոցավ Ս. Փրկչի հիվանդանոցին վրայոք եղած բանակռվությունները և ուրիշ ազգային զանազան վեճերը բավական չեն, կուզե գաղղիարեն լրագրի մը միջոցավ ևս ազգային վեճ մի բանալ, ի տեղեկություն օտարաց։ Այո անոր նպատակը այս է, քանզի մինչդեռ ԼԱ ՐԵՖՈՐՄ-ի հայ խմբագրին տաղանդը և ընտիր գրիչը Իզմիրի մեջ օտարազգի գիտնականներեն իսկ գոյություն կընդունի, բոլոր հասարակութենե մեծ քաջալերություն կըստանա և հայ ժողովրդյան պատիվը կավելցնե, մեր պարոն Վաղարշը անպիտան թերթ մի կհամարի զհիշյալ օրագիրը, արևելքը և արևմուտքը կխառնե և անոր խմբագիրը հանգուցյալ ՄԵՂՈՒԻՆ ՄԵՉՈՒԽԵՉԱՅԻՆ կը ուղարկե։ Ո՞վ չզարմանար ԻՐԱՎ լուսավորյալի մը այսպիսի ազգասիրության վրա։

Բայց չեմք կարծեր ամենևին, որ Կ.Պոլսո Լուսավորյալ Հայերը պարոն Վաղարշ տրամախոսին հետ համամիտ ըլլան»։

1869 թ., մարտի 29, շաբաթ, N 854

«Ազգային պարտուց մեջ ուշադրության արժանի կհամարինք մեր երկսեռ վարժարանաց դասատուաց հին պահանջքը, որ 49,071 ղուրուշի կհասնի»։

1869 թ., ապրիլի 26, շաբաթ, N 856

«Ցավոք սրտի կծանուցանեմք թե քաղաքիս մեջ հրատարակված ԼԱ ՐԵՖՈՐՄ անուն նորահաստատ օրագիրը անցյալ շաբաթ օրը խափանվեցավ երկու ամսվան համար. բայց այս առժամանակյա դադարումն ինչ պատճառ ըլլալը տակավին չհայտնվեցավ»։

1869 թ., հունիսի 21, շաբաթ, N 860

«ԼԱ ՐԵՖՈՐՄ անուն լրագիրը այս շաբթու սկսավ վերստին հրատարակվիլ ի ցնծություն ազգասիրաց»։

1869 թ. սկզբներից Հռիփսիմյան և Մեսրոպյան վարժարանների ընդհանուր տնօրենն էր Մատթեոս Մամուռյանը։ Նա փոխարինում էր Ոսկանյանին։ 1872-ին էլ, 1875-ին էլ դեռ Մամուռյանն էր։ 1878-ի կեսից՝ ազատված էր («Ա.Ա.», N 1095)։ Վերընտ. 1880-ի կեսերից՝ N 1152։

1869 թ., սեպտեմբերի 27, շաբաթ, N 867

«Բարձրապատիվ փոխարքան (Եգիպտոսի. Ս.Շ.) հաճեցավ Եվրոպիո գլխավոր լրագրապետները հրավիրել, որպեսզի ներկա գտնվին Շուեզի ջրանցքին բացվելուն տոնախմբությանը։ Կլսեմք, թե այս հրավիրելոց գալուն և երթալուն բոլոր ծախքը, ինչպես նաև անոնց Եգիպտոսի մեջ բնակության և սննդյան ծախքը Խըտիվին մարդասեր առատաձեռնությամբը յուր անձնական գանձեն պիտի ըլլան»։

1869 թ., նոյեմբերի 8, շաբաթ, N 870

«ՈՒրախ սրտիվ կը ծանուցանեմք, թե Իզմիրի ՐԵՖՈՐՄ գաղղիարեն օրագրույն գլխավոր խմբագիր մեծարգո Ոսկանյան Ստեփան աղան, ըստ օրինակի եվրոպացի երևելի խմբագրաց և գրագիտաց՝ Եգիպտոսի փոխարքային կողմանե հրավեր ընդունելու պատիվը ունենալով, անցյալները Ազիզյեի ընկերության շոգենավով Եգիպտոս գնաց ձրիաբար, ու Շուեիշի ջրանցքին բացվելուն տոնախմբության ներկա գտնված պիտի ըլլա։ Կը հաստատեն, թե փոխարքայեն հրավիրյալ խմբագրապետաց թիվը հազար հոգիի կհասնի»։

1869 թ. նոյեմբեր. Զմյուռնիայում ստեղծվում է հայ ընթերցատուն, որը նորատիպ գրքեր, պարբերականներ, օտար՝ հիմնականում ֆրանսերեն, գրքեր ուներ։ Նախաձեռնողն ու ղեկավարը Մատթեոս Մամուռյանն էր։

1872 թ., հունվարի 29, շաբաթ, N 928

«Իզմիրի հայ ժողովրդյան թիվը 7,000 հոգիի չափ է և անցյալ 1871 ամին մեջ 105 հոգի ծներ են։ Իսկ մեռյալներուն թիվը 129-ի կը հասնի, որոնցմե 15 հոգին Ծաղկի հիվանդությամբ վախճաներ են։ Հընթացս նույն տարվույն Իզմիրի հայ ժողովրդյան մեջ 29 ամուսնությունք տեղի ունեցեր են։ Այս վիճակագրական տեղեկության ճշգրությունը

կրնամք երաշխավորել, որովհետև քաղաքիս ազգային պաշտոնական արձանագրություններեն քաղված են»։

1872 թ., սեպտեմբերի 23, շաբաթ, N 945

Պողոս Արքեպիսկոպոս Թագթագյանի մահը, որ եղել է 1872 թ., սեպտեմբերի 9-ին շաբաթ առավոտյան։

«Նորին սրբազնությունը գրեթե 80 տարեկան էր և 40 տարիի չափ Իզմիրի վիճակին առաջնորդության ծանր պաշտոնը վարեց ամենայն խոհեմությամբ»։

Ծնվ. 1797 թ. Պրուսայուն։

1837 թ. Պողոս ծայրագույն վարդապետը Զմյուռնիայի առաջնորդ կընտրվի։

1839 թ. Գնում է Էջմիածին, Զմյուռնիո վիճակի եպիսկոպոս օծվելու (օծում է Հովհաննես Կարբեցին)։ Նույն տարին էլ գալիս է և

1839 թ. ուղարկվում է Արմաշ, վիճակի առաջնորդ

1845 – Նորից գալիս է Զմյուռնիա

1863 թ. – Գնում է Պոլիս, որպես պատրիարք

1869 թ. – նորից ու վերջնականապես գալիս է Զմյուռնիա

Գիտեր իտալերեն, լատիներեն ու տաճկերեն (վերջին 2-ը՝ վատ)։ Թարգ. Մասիլիոն «Վասն գլխաւոր պարտաւորութեանց եկեղեցականաց» և Պողոս Սենեյրի «Քարոզք աղուհացից»։

1873 թ., փետրվարի 24, շաբաթ, N 956

Զմյուռնիո հայ ժողովուրդն

«Օսմանյան կայսերության այս գլխավոր քաղաքին հայ բնակչաց թիվը 7000 հոգիի կհասնի և ունի գրեթե 1200 տուն, մի հոյակապ վարժարան վասն մանկանց և մի հոյակապ վարժարան վասն աղջկանց։ Այս ազգային հաստատությանց առաջինը Մեսրոպյան ուսումնարան կկոչվի, ուր 500-ի չափ աշակերտք կը հաճախեն, երկրորդին անունը Հռիփսիմյանց վարժարան է, և 250-ի չափ աշակերտուհի ունի։ Բայց յայսցանե փոքրիկ վարժարանի մի ևս կա Սահակյան դպրոց անվամբ, ուր 50-ի չափ աշակերտք կը հաճախեն, կարոտավոր ընտանյաց վերաբերյալ։ Թե՛ Մեսրովբյան, և թե Հռիփսիմյանց դպրոցին ծախքը՝ նմանապես Սահակյան դպրոցին ծախքը ազգային սնտուկեն կը լինի և աշակերք ու աշակերտուհիք ձրիաբար կընդունին իրենց ուսմունքը։ Ազգային սնտուկին տարեկան եկամուտը՝ որ ըստ մեծի մասին յանշարժ ստացվածոց կը գոյանա 3500 լիրայի չափ է, բայց

տակավին իբր 3000 լիրա պարտք ունի որ տարվե տարի վճարվելու վրա է քաղաքիս ազգային վարչության բարեջան խնամոքը։

Զմյուռնիո հայ ժողովուրդը ունի նաև քարաշեն հոյակապ մեծ եկեղեցի մի՝ սուրբ Ստեփաննոսի անվամբ և փոքրիկ եկեղեցի մի՝ Լուսավորչի անվամբ ի հիվանդանոցն որ բավականապես ընդարձակ է և քաղաքին մեջ ի հայոց թաղն կը գտնվի։

... Չմոռանամք առաջ բերելու, թե ունիմք նաև գաղղիարեն պատվական օրագիր մի ԼԱ ՐԵՖՈՐՄ անուն, որո գլխավոր խմբագիրն Զմյուռնիացի քաջ գաղղիագետ և ուսումնական հայ երիտասարդ մըն է, նորա պատասխանատու տնօրենն հայ և նորա տպագրիչն ևս հայ է։

Մոռացանք նշելու, թե հայկական թատրոն մի ևս ունիմք, ինչպես նաև երեք տպագրատունս. որոց առաջինը՝ Տետեյան հարուստ և մեծարժեք տպարանն է, ուր ամեն տարի մաքուր տպագրությամբ շատ գիրք կը հրատարակվին, ուր կը տպվի նաև ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼ ամսական-բանասիրական տետրակն։ Երկրորդն ԱՐՇԱԼՈՒՍՈ տպարանն է, որ այս լրագրին հրատարակությանն միայն հատկացյալ է։ Իսկ երրորդն՝ Թադիկյան պատվական տպարանն է, ուր գաղղիարեն, անգղիարեն և ուրիշ լեզվավ բավական աշխատություններ կը տպվին և ուր կը հրատարակվի ԼԱ ՐԵՖՈՐՄ կոչված գաղղիարեն օրագիրը։ Այս տպարանը, ուր տասնի չափ գործավորք անդադար կաշխատին, վիմագրության գործատուն ևս կրնա կոչվիլ, քանզի անոր տնօրեն տերն, այսինքն Թադիկյան հարգո պ. Պետրոսն, քաջ վիմագիր և հաջողաձեռն երիտասարդ մըն է, որ յուր հանճարովն և անխոնջ ջանիվքն այնպիսի կատարելության հասուցած է յուր վիմագրական աշխատություններն, որք կսքանչացուցանեն զնույն իսկ եվրոպացի արհեստավորներն»։

1873 թ., հուլիսի 14, շաբաթ, N 966

«Կը հիշեմք, որ քանի մի տարի առաջ Զմյուռնիո Գաղղիո հյուպատոսն այցելության եկավ Ս.Մեսրոպյան մեջ ազգային վարժարանին, ուր մեք (Ղուկաս Պալդազարյանը. Ս.Շ.) ևս ներկա էինք։ Մին ի գլխավոր վարժապետաց փութացյալ ցույց տվավ նմա զառաջադիմությունսն աշակերտաց, յուսումն գաղղիերեն լեզվին։ Բայց Գաղղիո տերության ներկայացուցիչն՝ զկնի աչքե անցնելո զանոնք, քանի մը բան հարցուց հայերեն լեզվին ուսման և քերականության վրայոք. վարժապետն չվարանեցավ պատասխանելու թե հայոց լեզուն քերականություն չունի. ընդ որ մեծապես զարմացավ հյուպատոսն։ Այլ մեք անմիջապես հարեցինք, թե վարժապետին զրուցածը աշխարհիկ բարբառույն կը վերաբերի և թե հայոց ազգն տեր է գրավոր պատվական և դյուրահասանելի լեզվի միո, որ կանոնավոր քերականություն ունի»։

1873 թ., դեկտեմբերի 23, շաբաթ, N 977

Վեպ Մսուրայ

«Լեալ եմ որդի առն վաճառականի Գրիգորայ ի տոհմե Մսուրյանց ծնեալ յամի տեառն 1808, յամսեանն դեկտեմբերի 20 ի ծովադիտակն Զմյուռնիա, որ ի փոքուն Ասիո ի Յունական գաւառի յաւազանէ յանուն հաւուն իմոյ կոչեցայ Մսուր»։

Տաս տարեկան հասակում (ուրեմն՝ 1818 թ.) հանձնում են Հովհան Վանանդեցուն, որի մոտ երկու տարի սովորում է «զհայկական բարբառոյ դպրութիւն այն է, զկարդալ և գրել»։ Հետագայում «դիմեալ վերստին առ Յովհաննու ուսուցչապետի ուրս և այլ ևս երկեամ մի առ նման կացեալ ուսայ զքերականութիւն, զճարտասանութիւն և զտրամաբանութիւն. ընդ երկոցունց դասակցաց իմոց Գրիգորի Կոստանդեան և Ղուկաս Գ. Պալդազարեան»։

1875-ին Գևորգ Պուպլին, որ քաջ գիտեր թուրքերեն ու ֆրանսերեն, Իզմիրում սկսում է թուրքերեն լեզվով թերթ հրատարակել, որը կոչվում էր «Ինթիհալ»։ (Նաև ստորագրում էր Գևորգ Բուպլիյան)։

1874 թ., դեկտեմբերի 14, N 1003

«Կը լսեմք, թե հայկազուն օրիորդ Ոսկանյան ... որ Ամերիկայի մեջ ընդունած է յուր դաստիարակություն և ընդհանրապես Միս Ոսկանյան անվամբ ծանուցյալ է քաղաքիս Հռիփսիմյանց վարժարանին մեջ անգղիարեն լեզուի դասատություն պիտի ընե վարձատրությամբ, ըստ թախանձագին խնդրո յուրո զոր ազգային հոգաբարձությունն ընդուներ է»։

1875 թ., օգոստոսի 9, N 1020

«Գաղղիա գտնվող ազգայնոց հոգևոր հովիվ արժ. Հյունքյարպեյենտյան տ. Հովհաննես ուսումնական քահանային՝ տերության կողմե կապված ամսականը կտրվելով, հիշյալ արժանապատիվ քահանայն հարկադրյալ է Փարիզի Հայկական մատուռը փակել և յուր ընտանյաց և զավակաց հետ Կ.Պոլիս վերադառնալ, կիսակատար վիճակի մեջ թողլով յուր 2 որդվոց կրթությունը»։

(927-ը մինչև 1876 թ. հուլիս նայել եմ)

1876 թ., փետրվարի 7, շաբաթ, N 1033

«Քաղաքիս ԼԱ ՐԵՖՈՐՄ անուն գաղղիարեն լրագիրն, որ շաբաթն անգամ մի կը հրատարակվեր, ամիս մի կա, որ սկսավ շաբաթն երկու անգամ հրատարակվիլ, առանց հավելման բաժանորդագնույն, որ տարին 20 ֆրանկ է։

Հիշյալ պատվական լրագրույն խմբագիր-տնօրենն ինչպես հայտնի է, Զմյուռնիացի Ոսկանյան Ստեփան աղան է, որ շատ տարի ի Փարիզ բնակյալ և անդ ստացյալ է

զդաստիարակություն յուր ամենայն հաջողությամբ։ Յուր քաջ գաղղիաբանությամբն, յուր ամենահաջող գրիչովն և յուր բնական տաղանդովն, որով յութ ամաց հետե կըխմբագրե զվերոհիշյալ լրագիրն, Ոսկանյան Ստեփան աղան պատիվ ըրած է և կընե միշտ քաղաքակից հայոց, ինչպես նաև ընդհանուր ազգին»։

1876 թ. փետրվարի համարում «Շահնուր» ստորագրությամբ «Արևելյան մամուլը» հոդված է հրատարակում ընդդեմ Ազգային կենտրոնական վարչության, որի համար 6 ամիս հարկադրում են դադարել։

1878 թ., հունիսի 3, շաբաթ, N 1093

«Արշալույս Արարատյանը կգուժե ... Ղուկաս Պալդազարյանի մահը։ Վախճ. 1878 թ. մայիսի 28-ին, կիրակի օրը։

Հանգուցյալը ծնած էր 1810-ին, մանկութենե ստացած էր ընտիր դաստիարակություն։ Իր հայերեն ուսմունքը և գրական ճաշակը ընդունած էր յուրս Միրզայան մեծանուն տեր Հովհաննես վարժապետին։ Բացի մայրենի լեզուեն, ուսած էր նաև հունարեն և գաղղիերեն լեզվաց գրականությունը, գործնականապես հմուտ էր նույնպես անգղիերենի և իտալերենի։

... առաջին անգամ ինքն ստեղծեց հրապարակային թերթիս խմբագրությունը, ոչ միայն հայոց, այլև բոլոր Թուրքիո ազգայնության մեջ, որ սկսավ 1840-ին։ Սույն առթիվ ստացավ նա Պոլսո անգղիական նախորդ դեսպաններեն նշանավոր քաղաքագետ լորդ Ստրետֆորդ Քենինկի մտերիմ բարեկամությունը, որ թե բարոյապես, և թե նյութապես սատար և պաշտպան եղավ սորա հրատարակությանը»։

Որդին՝ Երվանդ Պալդազարյան

Կինը՝ Թագուհի Պալդազարյան

1859-ից «Մեղվի» գործակալը Զմյուռնիայում Ղուկաս Պալդազարյանն էր

1878 թ. Զմյուռնիան ուներ 6000 հայ և 60 ուսումնական։

1878 թ., հոկտեմբերի 14, շաբաթ, N 1103

«Օկյուստ Քոնթ ի Զմյուռին կամ անաստվածություն»

«Սույն մակագիրը կըկրե անցյալ շաբթվանե ի վեր քաղաքիս մեջ հրատարակված տետրակ մի, հեղինակությամբ Պ. Ստեփան Ոսկանյանի, որ գաղղիարեն լեզուավ

խմբագրյալ ԼԱ ՐԵՖՈՐՄ անուն լրագրին հարգո հրատարակիչն է։ Հիշյալ երկը, որ 36 երեսե բաղկացյալ է, հերքումն է անցյալները նույնպես քաղաքիս մեջ հրատարակված Պ. Գալուստ Կոստանդյանի ՄԵԹՈՏԻ ՎՐԱ անվամբ գրքին։ Ցուցնելու համար հիշյալ հերքման տետրին թե՛ կարգավորյալ ոճը, և թե՛ զորավոր ձեռնարկություններն ընդդեմ ցնորական վարդապետությանց Մեթոտի, բավական է յուր հեղինակին անունը հիշել, որ ոչ միայն ազգայնոց, այլև քաղաքիս օտար ազգաց քով ևս համբավ գտած է, թե գաղղիաբանության, և թե յուր հմտալից ոճոյ մասին։ Եթե պակասություն մի ունի արժանի դիտողության, այն է ՄԵԹՈՏԻ լեզվավ չգրելը։ Սույն դիտողությունն ըրած է նաև տեղվույս Լատինաց առաջնորդ գեր. Աբաքքաբիեդրա արքեպիսկոպոսը յուր շնորհակալության գրույն մեջ, որում բավական գովություն ընծայելե հետո մեր գաղղիաբան հեղինակին, որու երկասիրությունն ոչ թե տետրակ, այլ օրինավոր գրքի մը արժեք ունի, կըսե, կը հավելու նաև ...»

«Թե հիշյալ հերքման տետրակը, և թե լատին առաջնորդի նամակը՝ որ հրատարակված է ԼԱ ՐԵՖՈՐՄԻ հոկտ. 18 թվույն մեջ, արժանի են ուշադրությամբ կարդալու»։

1879 թ., հունիսի 9, շաբաթ, N 1120

Ընկերությունները հիշատակելուց հետո «1866-ին ՈՒսումնասեր ընկերություն մի հաստատվեցավ, որ առաջին անգամ վարժարանաց բարվոքման և գիտության ծավալումին համար դրամական պիտոյից խնդիրն հոգացավ, բայց առանց ծնելու մեռավ, լուսո անհաշտ թշնամիներու հարվածեն վիրավորվելով...»

1879 թ., սեպտեմբերի 29, շաբաթ, N 1128

«Քաղաքիս ԼԱ ՐԵՖՈՐՄ լրագրին խմբագրապետ մուսյո Ս.Ոսկան, որ ասկե առաջ «ՄԵԹՈՏԻ ՎՐԱ» անուն գրքույկին ի պատասխանի գաղղիերեն տետրակ մը հրատարակած և մեծ ընդունելություն գտած էր, այս անգամ ևս ի պատասխանի գաղղիացի գիտնական Մ. Լիթթրեի, որ պաշտպանած էր հոդվածով մը հիշյալ գրքույկին հեղինակ պարոն Գ. Կոստանդյանը, ուրիշ տետրակ մը հրատարակած է «Մ.Է. ԼԻԹԹՐԵ ԵՎ ԱԹԵԻԶՄ (Պ. Է. ԼԻԹԹՌԵ ԵՎ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆ)» անունով»։

1879 թ., հոկտեմբերի 13, շաբաթ, N 1129

ՄՈՒՍՅՈՒ Ս.ՈՍԿԱՆ

«Այս անունը, որ պատկառանք կազդե ամեն անոնց, որք զինքը կըճանաչեն իր գործերով, մոտերս կրկին կըսկսի Եվրոպայի գիտնոց ականջին հասնիլ։ Մ. Ս. Ոսկան, որո գրական բարձր հանճարը ծանոթ է բոլոր հայ գրագիտաց, երկար տարիներ լուսավորության և գիտության օրրան եղող Բարիզ ապրելե, հոն երկու տեսակ ընտիր

հանդեսներ հրատարակելէ և գրական տաղանդը լիովին ստանալէ ետև, երբ հայրենիք կը վերադառնա, կծանոթանա նաև օտար ժողովրդոց և օտար գրագիտաց, մինչև գաղղիարեն ԼԱ ՐԵՖՈՐՄ լրագրի հրատարակության կձեռնարկե։

Մ. Ս. ՈՍԿԱՆ արձագանգ կըգտնե Փարիզի Ակադեմիո մեջ յուր անցյալները հրատարակած ՕԿՅՈՒՍԹ ԳՈՆԹ Ա ՍՄՅՈՒՌՆԷ ԵՎ ԱԹԵԻԶՄ անուն տետրակին միջոցավ, տետրակ մը, որ ստվար հատորի մը տեղ կը բռնե իր իմաստալից պարունակության համեմատությամբ։ Տետրակ մը որ մեծ Գ. Կոստանդյանի ՄԵԹՈՏԻ ՎՐԱ խորագրով գրքույկը կքննադատեր...

Արդ մինչդեռ Մ. Ս. Ոսկան յուր տետրակով կըկործանե ՄԵԹՈՏԻ խարխուլ շենքը, Ակադեմիո անդամներեն Մ. Լիթթրե, առանց քննադատությունը քննադատելու, կուգա Մ.Գ. Կոստանդյանի փլատակ շենքը նորոգել, եղբայրական մխիթարություններ և հայրական քաջալերություններ տալով նմա։ Մ. Ս. Ոսկան չհապաղիր Մ. Լիթթրեի ալ պատասխանել ուրիշ տետրակով մը։ Տետրակը նախ և առաջ, հայ ժողովրդյան դարական ընկճանաց և թըշվառությանց դեմ անհողդողդ մնալով՝ երկար դարերե ի վեր ապրելուն պատճառը պարզելէ ետև, կուգա Մ. Լիթթրեն համառոտիվ իր ընթերցողաց ներկայել, որմե ուշիմ ընթերցողը կրնա հասկնալ, թե որքան գիտության դեմ կմեղանչե նա անհեթեթ դրության հիմնադրի մը հաջորդությունն ստանձնած, հոս և հոն իրեն ներակրթյալներ մուրալով։ Ապա կրկին վերադառնալով տիեզերական գոյության և Բացարձակին խնդրույն կ'իմաստասիրե իր բնատուր հանճարով, և հետո, երևելի գիտնոց և փիլիսոփայից գրական հատվածներեն առաջ բերելով, կըվերջացնե իր խոսքը։

Վերջապես, արևելցի գրական այս մեծ մարդը կրկին փայլ մը կուտա, իր հանճարին փայլ մը, որ ամբողջ հայության կըվերաբերի»։

1884 թ., հունիսի 23, շաբաթ, N 1292

«...Սակայն ասոր հակառակ եթե օտար դպրոցներ ուսում առնող հայ պատանի մը նվազ հմուտ, ազգայնության անտարբեր և ցուրտ զգացումներով, սնափառ և ունայնասեր կը ներկայի մեզ, մյուս կողմեն ավելի ճարտար և համարձակ կը խոսի օտար լեզուներ, զոր եթե ազգային վարժարաններու աշակերտը գրապես ավելի քաջ ուսած է, սակայն դժբախտաբար զայն խոսելու մասին չունի այնքան հաջողակություն»։

«Մեր վարժարաններու այս ծանր վիճակը սփոփիչ չեն կրնար լինել այն ամեն անձերու, որոնք 15-20 տարիե ի վեր անոնց ընթացքին քիչ շատ հետամուտ լինելով կը ճանչեին և գիտեն որ իրաց ներկա վիճակը կը շարունակվի ճիշտ այն օրեն, որ մեծ գրագետ մը Արևմուտքեն գալով մեծ հեղաշրջում մը առաջ բերավ մեր վարժարաններու մեջ, հեղաշրջում մը, զոր ներկա տնօրենությունը քիչ ետքը, այն է 1868-ին ավելի իրագործեց և արդյունավորեց։ Մեծ. Մամուռյան 1868-են ի վեր կարճ միջոցի փոփոխությամբ տնօրեն կըգտնվի մեր հայ Վարժարաններուն վեշտասնամյա շրջան մը...

...Հայելով (Մամուռյանը. Ս.Շ.) թե մենք ավելի արհեստավորներու և վաճառականներու պետք ունինք, քան թե հռետորներու, իմաստասերներու և տնտեսագետներու»։

1884 թ., հուլիսի 7, շաբաթ, N 1296

«Ազգային պարտքը սկսում է գոյանալ 1865-ի շրջանից.

1872-ին քչացավ և հասավ 4835 ½ լիրայի

1874-ին՝ (ապրիլի 30) դարձավ 4369 ½ լիրա

1878-ին՝ 6000 լիրա

1881-ին՝ (հունիսի 30) 7600 լիրա

Իսկ այսօր մոտ 8000 լիրա»։

Վարժարանների մասին հոդված կա

1884 թ., հոկտեմբերի 10, չորեքշաբթի, N 1323

«Բակյուսի կամ Պագոսի լերին ստորոտը բոլորաձև, գեղատեսիլ ծովախորշի մ'եզերքը շրջապատող այս բազմադարյան քաղաքը ... Լոյդի ավստրիական ընկերության շոգենավով էր կապված աշխարհին։

Ճանապարհը «մինչ հյուսիսային արևելյան կողմն յածած միջոցին» հաճույքով և նախանձելի աչքով կդիտե Եվրոպայի և հույն հասարակության հարուստ բարեկեցիկ մասին գրված բավական կանոնավոր փողոցները, ուր կըկանգնին ազգի ազգի (իմա՝ զանազան. Ս.Շ.) և իրարու աննման շենքեր, ապարանքներ, հոյակապ եկեղեցիներ, ներքուստ եվրոպական ճաշակով շքեղորեն զարդարված և գողտրիկ պարտեզներով պսակված բնակարաններ, ապա մինչ շրջանին կարգը գալով, կըհասնի Հայոց թաղը, որ քաղաքին կեդրոնը քառակուսի դիրքի մը վրա կըպատկերի ուղղաձիգ և կանոնավոր փողոցներով, և կըտեսնե նմանապես հաճոյանոք իրարմե դույզն տարբերությամբ ընտիր ճաշակով կահավորյալ տներ, ընդ որս և եվրոպական ձև և բնակչաց ըստ բավականի բարեկիրթ վարմունք – մինչ կըսենք վերջապես, այս ամենն այսպես կըտեսնե, անդին, քաղքին հարավային կողմն հածած միջոցին, եթե ոչ սոսկմամբ, գոնե տխրազդեցիկ զգացմամբ կը նշմարե նեղ ու մութ, գալարապտույտ ու ծամածուռ և ելքն անհայտ փողոցներ, ուր խճողված են մասամբ աղմկահույզ և մասամբ բոլորովին ասոր հակապատկերը ներկայացնող մշտնջենի լռության մեջ թաղվող բնակարաններ, ուստի առանց դժվարության կըգուշակե, թե կը գտնվի քաղքին այն մասին մեջ, ուր կը բնակին հրեայք և մահմետականք»։

1884 թ., հոկտեմբերի 13, N 1324

Զմյուռնիան արտահանում էր. փալամուտ, ափիոն, բամբակ, թուզ, չամիչ, մեծ քանակությամբ արմտիք։